



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐԱԿՐՄԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.  
21-րդ դարի մարտահրավերներ  
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:  
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:  
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

**ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

2017 թ., նոյեմբերի 22-24

**Երևան 2018**

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65  
S 778

Հրատարակվում է  
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհրդի նախագահ՝**

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

**Խմբագրական խորհուրդ՝**

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
- ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
- ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և  
S 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,  
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,  
շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մատչում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ  
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

## ՌՈՒՋԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, ՀՊՏՀ

### ԶՔՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՍԵՂՈՆԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

*Հիմնաբառեր. սեզոնայնություն, զբոսաշրջային արտադրանք, գործոն, ցուցչային տրենդ, ռեգրեսիոն մոդել, կեղծ փոփոխական*


Զբոսաշրջությունը դիտվում է որպես տնտեսական գործունեության հեռանկարային ոլորտ, որը կարող է դառնալ կայուն զարգացմանը և աղքատության չափերի կրճատմանն ուղղված միջոցառումների կառուցվածքային մաս: Հողվածում կատարվել է ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջիկների քանակի սեզոնայնության գնահատում՝ կիրառելով ցուցչային տրենդի մոդելը՝ կեղծ փոփոխականներով ռեգրեսիոն մոդելի հետ համարելով: Ստացված ցուցչային մոդելները լավ են մոտարկում ելակետային տվյալները, ինչը թույլ է տվել կատարել 2017 թ. երկիր ժամանող և երկրից մեկնող ուղևորների հնարավոր թվաքանակի կանխատեսում՝ ըստ եռամսյակների:

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության ամենախոշոր, բարձր արդյունավետ և առավել դինամիկ զարգացող ճյուղերից մեկն է: Այն դիտվում է որպես տնտեսական գործունեության հեռանկարային ոլորտ, որը կարող է դառնալ կայուն զարգացմանը և աղքատության չափերի կրճատմանն ուղղված միջոցառումների կառուցվածքային մաս: Հաշվի առնելով զբոսաշրջության տնտեսական, սոցիալական և քաղաքական դերն ու նշանակությունը, այն շարունակվում է համարվել Հայաստանի տնտեսության գերակա ճյուղ և ուղղված է երկրի կայուն տնտեսական զարգացմանն ու կենսամակարդակի բարձրացմանը<sup>1</sup>:

Զբոսաշրջության շուկային բնորոշ են զբոսաշրջային արտադրանքի նկատմամբ պահանջարկի նշանակալի սեզոնային տատանումներ, որոնք իրենց ներգործությունն են թողնում ինչպես զբոսաշրջությամբ զբաղվող կազմակերպությունների շահութաբերության ցուցանիշի, այնպես էլ զբոսաշրջիկների սպասարկմանն ուղղված մյուս ոլորտների վրա: Հայաստանում զբոսաշրջությունը բնութագրվում է խիստ արտահայտված սեզոնայնությամբ: Սեզոնայնությունը պայմանավորված է մի շարք առաջնային և երկրորդային գործոններով, որոնք ներկայացված են գծապատկեր 1-ում:

Զբոսաշրջության ոլորտում սեզոնայնության վիճակագրական ուսումնասիրության գործնական կարևորությունը կայանում է նրանում, որ ներտարեկան ժամանակային շարքերի վերլուծության ժամանակ ստացված քանակական բնութագրիչները թույլ են տալիս բացահայտել պահանջարկի անհամաչափությունները ըստ ամիսների և եռամսյակների:

<sup>1</sup> Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, 2007, էջ 27:



**Գծապատկեր 1. Չբուսաշրջության սեզոնայնության առաջնային և երկրորդային գործոնները**


Վիճակագրության մեջ մշակել են մի շարք մեթոդներ, որոնց օգնությամբ բացահայտվում են փաստացի սեզոնայնությունը, սեզոնային ալիքի ընդհանուր տեսքը, չափվում են սեզոնային տատանումների աստիճանը և որոշվում սեզոնային ալիքի հնարավոր փոփոխություններն ապագայում: Աղյուսակ 1-ում ներկայացված են 2008–2016 թթ. զբոսաշրջության նպատակով ՀՀ ժամանած և մեկնած ուղևորների<sup>1</sup> զբոսաշրջիկների թվաքանակի վերաբերյալ եռամսյակային տվյալներ:

<sup>1</sup> Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010)՝ միջազգային զբոսաշրջիկ է համարվում ցանկացած անձը, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր՝ ոչ պակաս, քան 24 ժամ և ոչ ավելի, քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեն ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

**Զբոսաշրջիկների թվաքանակի վերաբերյալ եռամսյակային տվյալները<sup>1</sup>  
2008–2016 թթ. (մարդ)**

Եռամս- յակներ	Ուղևորներ	Տարիներ									
		2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	
1-ին	ժամանող	84234	93391	118468	159812	178640	199480	242354	232583	252506	
	Մեկնող	89542	91342	114717	151473	166807	189182	224054	214757	227587	
2-րդ	ժամանող	123245	123718	144704	166613	199294	222330	252290	256917	248612	
	Մեկնող	121641	121715	150813	179596	198583	223252	249559	250326	243194	
3-րդ	ժամանող	192211	220354	277214	314216	365945	405068	444163	446047	467892	
	Մեկնող	180536	201330	259865	292290	341164	372939	410082	412122	432848	
4-րդ	ժամանող	158752	149292	188874	192105	219156	255106	264938	256572	290647	
	Մեկնող	123829	137295	190075	207133	258818	294648	314365	310164	359058	

Աղյուսակում ներկայացված եռամսյակային տվյալները գրաֆիկորեն պատկերված են գծապատկեր 2-ում:



**Գծապատկեր 2. Զբոսաշրջիկների քանակի վերաբերյալ եռամսյակային տվյալներ, 2008–2016 թթ.**

Գծապատկեր 2-ից երևում է, որ 2008–2016 թթ. ՀՀ ժամանած և մեկնած (ներգնա և արտագնա զբոսաշրջիկների) ուղևորների թիվն ունեն աճման միտում՝ հստակ արտահայտված սեզոնային տատանումներով: Ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ ժամանած զբոսաշրջիկների քանակի նվազման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել

<sup>1</sup> <http://armstat.am/am/?nid=14>:

է 2009 թվականի 4-րդ եռամսյակում (նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ նվազել է շուրջ 6 տոկոսով), որը թերևս կարող է պայմանավորված լինել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով: ՀՀ ժամանած և մեկնած ուղևորների քանակի նվազման միտումներ դիտարկվել են նաև 2015 թվականի 1-ին, 4-րդ և 2016-ի 2-րդ եռամսյակներին. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ երկիր ժամանած զբոսաշրջիկների թիվը նվազել է համապատասխանաբար՝ 4.03, 3.15 և 3.23 տոկոսով, իսկ երկրից մեկնածներինը՝ 4.15, 1.34 և 2.85 տոկոսով:

Համեմատելով 2016 թվականի համապատասխան եռամսյակային թվերը 2008-ի նույն ժամանակաշրջանի հետ՝ նկատում ենք, որ 1-ին եռամսյակում մեկնած զբոսաշրջիկների քանակն աճել է 2.54 անգամ, 2-րդ եռամսյակում՝ շուրջ 2 անգամ, 3-րդ եռամսյակում՝ 2.4 անգամ, 4-րդ եռամսյակում՝ 2.9 անգամ: Առաջին հայացքից կարող է թվալ, թե աճը պայմանավորված է եղել բնակչության կենսամակարդակի բարձրացմամբ, սակայն, վերլուծելով բնակչության եկամուտների կամ ծախսերի տարբերակման համար հաշվարկվող «բևեռային» քվինտիլների հարաբերության գործակիցը<sup>1</sup>, գալիս ենք այն եզրակացության, որ 2015 թ. 2008 թ. համեմատ աճել է 20% ամենաապահով և 20% ամենաանապահով բնակչության դրամական եկամուտների հարաբերակցությունը՝ 7.8 անգամից հասնելով 8.4 անգամի, իսկ սպառողական ծախսերի մասով՝ 5.2 անգամից հասնելով 5.6 անգամի, ինչը փաստում է շերտավորման խորացման մասին:

2008–2016 թթ. ՀՀ ժամանած և մեկնած զբոսաշրջիկների թվի սեզոնայնության գնահատման համար կիրառվել է ցուցչային տրենդի մոդելը՝ կեղծ փոփոխականներով ռեգրեսիոն մոդելի հետ համատեղ:

Եռամսյակային տվյալներով ժամանակային շարքը մոտարկող ցուցչային մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$Y_i = \beta_0 \beta_1^{X_i} \beta_2^{Q_1} \beta_3^{Q_2} \beta_4^{Q_3} \varepsilon_i, \quad (1)$$

որտեղ  $X_i$ -ն կողավորված եռամսյակային արժեքներն են,  $i=0, 1, 2, \dots$ ,

$Q_1 = 1$  առաջին եռամսյակի համար և 0՝ մնացած եռամսյակների համար,

$Q_2 = 1$  երկրորդ եռամսյակի համար և 0՝ մնացածների համար,

$Q_3 = 1$  երրորդ եռամսյակի համար և 0՝ մնացածների համար,

$\beta_0$ -ն՝ Y փոփոխականի տեղաշարժը,

$(\beta_1 - 1) \cdot 100\%$  - ը՝ աճի եռամսյակային մակարդակը (%),

$\beta_2$ -ը՝ առաջին եռամսյակի բազմապատկիչը՝ 4-րդ եռամսյակի նկատմամբ,

$\beta_3$ -ը՝ երկրորդ եռամսյակի բազմապատկիչը՝ 4-րդ եռամսյակի նկատմամբ,

$\beta_4$ -ը՝ երրորդ եռամսյակի բազմապատկիչը՝ 4-րդ եռամսյակի նկատմամբ,

<sup>1</sup> Այն է՝ 20% առավել ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակի հարաբերությունը 20% նվազագույն ապահովված բնակչության եկամուտների կամ ծախսերի մակարդակին:

$\varepsilon_i$  -ն՝  $i$ -րդ ժամանակահատվածում պատահական բաղադրիչի արժեքը:

Ցուցչային մոդելը ձևափոխվել է գծային տեսքի, և կիրառվել է փոքրագույն քառակուսիների մեթոդը: Պետք է նկատել, որ եռամսյակային տվյալներով ժամանակային շարքը մոտարկող մոդելում չորս եռամսյակները հաշվի առնելու համար հարկավոր է երեք կեղծ փոփոխական՝  $Q_1, Q_2$  և  $Q_3$ : Կեղծ փոփոխականներ սահմանելիս չորրորդ եռամսյակը համարվում է բազային և կոդավորվում է 0: Հաշվարկները կատարվել են Microsoft Excel ծրագրի օգնությամբ:

Այսպես, երկիր ժամանած և երկրից մեկնած ուղևորների՝ զբոսաշրջիկների թվաքանակի մոդելներն ունեն հետևյալ տեսքը.

$$Y_{\text{ժամանած}} = 125398.113 \cdot 1.029^{X_i} \cdot 0.821^{Q_1} \cdot 0.917^{Q_2} \cdot 1.6^{Q_3},$$

$$Y_{\text{մեկնած}} = 129748.316 \cdot 1.031^{X_i} \cdot 0.734^{Q_1} \cdot 0.861^{Q_2} \cdot 1.386^{Q_3} :$$

Ստացված մոդելների  $\hat{\beta}_0, \hat{\beta}_1, \hat{\beta}_2, \hat{\beta}_3$  և  $\hat{\beta}_4$  գործակիցները մեկնաբանվում են հետևյալ կերպ.

- երկիր ժամանած ուղևորների՝ զբոսաշրջիկների մոդելային գնահատականը 2008 թվականի 1-ին եռամսյակում կազմել է 125398 մարդ, իսկ երկրից մեկնած ուղևորների համար՝ 129748 մարդ,
- աճի եռամսյակային մակարդակը երկիր ժամանած զբոսաշրջիկների համար կազմել է 2.9%, իսկ երկրից մեկնածների համար՝ 3.1%,
- առաջին եռամսյակում երկիր ժամանած զբոսաշրջիկների քանակը 17.9%-ով քիչ է եղել, քան չորրորդ եռամսյակում, իսկ մեկնած ուղևորներինը՝ 26.6%-ով,
- երկրորդ եռամսյակում երկիր ժամանած զբոսաշրջիկների քանակը 8.3%-ով քիչ է, քան չորրորդ եռամսյակում, իսկ մեկնած զբոսաշրջիկներինը՝ 13.9%-ով,
- երրորդ եռամսյակում ժամանած զբոսաշրջիկների քանակը 60%-ով ավելի է, քան չորրորդ եռամսյակում, իսկ մեկնած ուղևորներինը՝ 38.6%-ով:

Ստացված ցուցչային մոդելները լավ են մոտարկում ելակետային տվյալները. դետերմինացիայի գործակիցները ստացվել են՝  $R_{\text{ժամանած}}^2 = 0.944$ ,  $R_{\text{մեկնած}}^2 = 0.951$ ,

$F$  վիճակագրությունները՝  $F_{\text{ժամանած}} = 129.5$ ,  $F_{\text{մեկնած}} = 149.3$ , իսկ  $P$ -արժեքը՝ 0,000: Բացի այդ, ռեգրեսիայի գործակիցները նույնպես վիճակագրորեն նշանակալի են  $\alpha=0.05$  նշանակալիության մակարդակի դեպքում, ինչը թույլ է տալիս ստացված մոդելները կիրառել կոնկրետ եռամսյակում երկիր ժամանող ուղևորների և երկրից մեկնող ուղևորների հնարավոր քանակները կանխատեսելու համար: Այսպես՝ երկիր ժամանած և երկրից մեկնած զբոսաշրջիկների կանխատեսված թվաքանակը 2017 թ. 1-ին եռամսյակում կազմել է համապատասխանաբար՝ 278612 և 279898, 2-րդ եռամսյակում՝ 319521 և 338065, 3-րդ եռամսյակում՝ 572796 և 561048, 4-րդ եռամսյակում՝ 368129 և 416869 մարդ: Հիմնվելով կանխատեսվող տվյալների վրա՝ կարելի է ասել, որ 2017 թվականի ընթացքում կունենանք 1539058 զբոսաշրջիկ, այսինքն՝ կարճաժամկետի շուրջ 22 տոկոս



ած: Այսպիսի կանխատեսված արդյունքներ կստացվեն այլ հավասար պայմաններում, կամ էլ եթե որոշ առումով զերծ մնանք արտաքին և ներքին որոշ ազդակներից: Որպես կանոն, կանխատեսման ճշգրտության մասին ընդունված է դատել դրա սխալի մեծությամբ, որն էլ կախված է փաստացի և կանխատեսված արժեքների համընկման աստիճանից: Հիմք ընդունելով 2017 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակներում ՀՀ ժամանած զբոսաշրջիկների վերաբերյալ պաշտոնական տվյալները՝ հաշվարկվել է կանխատեսման հարաբերական սխալը: Ըստ հաշվարկային արդյունքների՝ 1-ին եռամսյակի համար ստացվել է 4.7%, իսկ 2-րդ եռամսյակի համար՝ 1.3%, որը բավական փոքր սխալ է կանխատեսված ժամանակաշրջանի համար:

**РУЗАННА ГЕВОРГЯН**

## **СТАТИСТИЧЕСКАЯ ОЦЕНКА СЕЗОННОСТИ ТУРИЗМА В РА**

*Ключевые слова:* сезонность, туристические продукты, фактор, экспоненциальный тренд, модель регрессии, фиктивная переменная

*Туризм рассматривается как перспективная область экономической деятельности, которая может стать составной частью мероприятий, направленных на устойчивое развитие и на сокращение бедности. В статье при помощи модели экспоненциального тренда, совместно с регрессионной моделью с фиктивными переменными, проведена оценка сезонности численности прибывших и выезжающих туристов РА. Полученные экспоненциальные модели хорошо аппроксимируют исходные данные, что позволило спрогнозировать возможную численность прибывающих и выезжающих из страны туристов по кварталам за 2017 год.*

**RUZANNA GEVORGYAN**

## **STATISTICAL EVALUATION OF TOURISM SEASONALITY RA**

*Key words:* seasonality, tourism products, factor, exponential trend, regression model, false variable

*Tourism has increasingly been viewed as a promising area of economic activity that could become a structural part of poverty alleviation and sustainable development. The article assessed the seasonality of the number of incoming and outgoing tourists in Armenia using the trend model, combined with the false variables regression model. These models highly approximate initial data, which allowed to make predictions by quarters about the possible number of incoming and outgoing passengers in 2017.*